

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՊԻ ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐՋ
(1980-ական թվականներ)**

20-րդ դարի երկրորդ կեսը Թուրքիայում հարուստ է ներքաղաքական բուռն զարգացումներով, ինչի արտացոլումներից է այն, որ տեղի ունեցավ երկու զինվորական հեղաշրջում (1960 և 1980թթ.) և երկու անգամ էլ զինվորականությունը միջամտեց քաղաքական կյանքին (1971 և 1997թթ.): Հատկապես 1980թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած հեղաշրջումն ընդունված է որակել որպես «Հանրապետության պատմության ամենաարյունոտ ժամանակաշրջան»⁶⁷⁰: Հարկ է փաստել, որ թուրքական գրականությունը բավական արագ է արձագանքում այդ երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական զարգացումներին, ուստի՝ ինչ-որ տեղ բնականոն էր նաև 1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման արտացոլումը գրականության մեջ:

Քաղաքական իրադարձությունների նկատմամբ նորագույն շրջանի թուրքական գրականությունը սկսել է հետաքրքրություն ցուցաբերել 20-րդ դարի արդեն 20-50-ական թվականներից, սակայն սոցիալ-քաղաքական իրադարձությունները երբևէ այդքան լայն արձագանք չեն գտել թուրքական գրականության մեջ, որքան 1960-ականների վերջերին և 1970-ականների սկզբներին: Ուստի՝ թուրքական քաղաքական վեպի ժանրի զարգացման ամենանշանակալից փուլ է համարվում 1971թ. մարտի 12-ի զինվորական միջամտությունից հետո ընկած ժամանակահատվածը, որը թուրքական գրականագիտության մեջ ստացել է «մարտի 12-ի վեպ» անվանումը: Այդ փուլը նշանակալի դեր ունեցավ թուրքական քաղաքական վեպի ժանրի ամրապնդման և զարգացման գործում:

1980թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումը ևս ազդեցություն ունեցավ գրական զարգացումների և առավել կոնկրետ քաղաքական վեպի թեմատիկ ուղղվածության վրա: Այդ փուլն ընդունված է կոչել «սեպտեմբերի 12-ի վեպ» անվամբ, և այն ունի «մարտի 12-ի վեպից» տարբերվող թեմատիկ և այլ առանձնահատկություններ: Թուրք գրականագետների մեծ մասը կարծում է, որ «սեպտեմբերի 12-ի» վեպերի ուսումնասիրությունը չի կարող անկախ լինել «մարտի 12-ի» գրական ժառանգությունից, ավելին՝ դրանք պետք է դիտարկվեն նույն հարթության մեջ, որպեսզի պարզ լինեն թուրքական քաղաքական վեպի զարգացման միտումները, թեմատիկ նմանություններն ու տարբերությունները: Թուրք գրականագետ Սիբել Լրզրբը 70-ականներին գրված «մարտի 12-ի» վեպերը բնորոշում է որպես «նախասեպտեմբերյան» գրականություն. «70-

⁶⁷⁰ Մինչև 1983 թ. տևած ռազմական դրության արդյունքում քրեական գործ հարուցվեց 1 680 000 մարդու նկատմամբ: 650 000 մարդ ձերբակալվեց ու խոշտանգումների ենթարկվեց, դատապարտվեց 210 000 մարդ, սպանվեց 7000 քաղաքացի, ընդ որում՝ 517-ը մահվան դատապարտվեցին, կախաղան բարձրացվեցին 50-ը: 171 մահ արձանագրվեց որպես խոշտանգումների արդյունք: 299 մարդ մահացավ բանտում, 17-ը սովամահ եղավ, 16-ը սպանվեց փախուստի փորձի ժամանակ, 95-ը՝ «ուստիկանության հետ զինված ընդհարման արդյունքում», իսկ 43-ը «ինքնասպան եղան»: 388 000 մարդ զրկվեց անձնագրից, իսկ 14 000-ը վտարվեց երկրից: Փակվեց 23 677 կազմակերպություն, դատական կարգով հետապնդում հայտարարվեց 400 լրագրողի նկատմամբ, արգելվեց մոտ հազար ֆիլմ, ոչնչացվեցին տոննաներով թերթեր, ամսագրեր ու գրքեր: Մանրամասն տե՛ս Öngider S., Son Klasik Darbe: 12 Eylül Söyleşileri, İstanbul, 2005.

ականներին գրված վեպերի մեծ մասը ավելի շատ «նախասեպտեմբերյան», քան «հետմարտյան» վեպեր են»⁶⁷¹:

Մեպոտեմբերի 12-ի գրականությունը մեծապես ձախակողմյա էր⁶⁷², հերոսները հիմնականում հեղափոխականներն էին, որոնք ներկայացված էին իրենց քաղաքական գործունեությամբ, գործած սխալների հանդեպ ինքնաքննադատական մոտեցմամբ, հեղաշրջումից հետո իրենց ընկերների հետ ունեցած հարաբերություններով, հոգեբանական ծանր ապրումներով: 1980-ական թվականների գրականության հիմնական թեմատիկան խոշտանգումներն ու բանտերն էին, բռնակալությունը, համալսարանների և ակադեմիական այլ կառույցների վրա գործադրվող ճնշումը, ձախակողմյա կառույցների պայքարը, ներքին հաշվեհարդարները, քաղաքական գաղափարախոսությունների նկատմամբ հավատի կորուստը և այլն⁶⁷³: Այս վեպերում բացասական առանձնահատկություններից է այն, որ մեծ տեղ էր տրվում խոշտանգումների նկարագրությանը և գրեթե անտեսվում էր դրանց նախորդած դեպքերը և պատճառները⁶⁷⁴: Քաղաքականացված այս վեպերի մեծ մասը վեպ-հուշագրություններ են, և չափից ավելի շատ խոշտանգումների նկարագրությունների պատճառով դրանք ընդունված է անվանել նաև «Բռնությունների գրականություն»⁶⁷⁵:

Մեպոտեմբերի 12-ի վեպերում նկատվում են նաև կերպարների և կիրառված գեղարվեստական հնարքների առանձնահատկություններ: Մեծ տեղ է տրվում զգացմունքային մարդու և մարդ-ռոբոտի կերպարների միջև տեղի ունեցող հոգեբանական բախմանը⁶⁷⁶: Այս ստեղծագործությունների տարածված կերպարներից են մատնիչները. եթե մարդիկ կապ էլ չունենային հեղաշրջման կամ քաղաքականության հետ, միևնույն է վախենում էին բանասարկություններից, քանի որ հասարակությունը պոտենցիալ մատնիչ էր⁶⁷⁷: 1980-ական թթ. գրողներից շատերն իրենց վեպերում անդրադարձել են նաև հեղափոխական կնոջը՝ ընդգծելով այն հանգամանքը, որ ձախակողմյա կազմավորումներում կնոջ նկատմամբ շարունակվում էր պահպանողական վերաբերմունքը, սեռական ոտնձգությունները և այլն: Բացի այդ՝ վեպերի նյութ են դարձել նաև կնոջ նկատմամբ հեղաշրջումից հետո հասարակական ճնշումները, հասարակությունից նրա օտարումը: Թերևս այս կերպ գրողները ցանկացել են ընդգծել կնոջ դերը շարժման ու ժամանակաշրջանի քաղաքական պատմության մեջ՝

⁶⁷¹ Irzik S., The Constructions of Victimhood in Turkish Coup d'état Novels: Is Victimhood without Innocence Possible?, *Betraying The Event* Constructions of victimhood in contemporary culture, Cambridge Scholars Publishing, 2009, p. էջ 11:

⁶⁷² Զինվորական հեղաշրջումները և միջամտությունները հանգեցնում էին հատկապես ձախակողմյա գաղափարախոսության կրող մտավորականության նկատմամբ ճնշումների և սահմանափակումների: Թուրք գրականագետ Բերնա Մորանը խոսելով այս մասին զուգահեռներ է անցկացնում 1971-ի և 1980-ի միջև. «Մարտի 12-ի ռազմական միջամտությունից հետո էլ երկրում ձախակողմյա տրամադրությունները վերացնելու համար դաժան բռնաճնշումներ սկսվեցին, որոնք հասարակությունը «վերանշակելուց» բացի այլ ազդեցություն չթողեցին: Մակայն 1980 թ. ռազմական հեղաշրջման նպատակը միայն ձախակողմյա ուժերի ձեռքերն ու ոտքերը կապելը կամ հասարակությանը սարսափի մեջ պահելը չէր, այլև նոր արժեքներ, նոր աշխարհայացք ներարկելու միջոցով այդ գաղափարախոսությունն արմատախիլ անելը»: *St'u*, Moran B., *Türk Romanına Eleştirel Bir Bakış III*, İstanbul, 2005, s. 49.

⁶⁷³ Aytaç G., *Çağdaş Türk Romanları Üzerine İncelemeler*, Ankara, 1990, s. 105.

⁶⁷⁴ Irzik S., նշվ. աշխ., էջ 9:

⁶⁷⁵ Öztürk Y., *Türk Edebiyatında 12 Eylül*, Mostar Aylık Kültür ve Aktüalite Dergisi, 91. Sayı, <http://www.mostar.com.tr/Detay.aspx?Sayi=58&YaziID=1184>

⁶⁷⁶ Aytaç G., նշվ. աշխ., էջ 49:

⁶⁷⁷ Öztürk Y., նշվ. հոդ., <http://www.mostar.com.tr/Detay.aspx?Sayi=58&YaziID=1184>

ձախակողմյա գաղափարախոսության, դաժան բռնաճնշումների նկարագրության կողքին տեղ տալով նաև ֆեմինիստական մոտեցումներին: Նկարագրելով հերոսների հոգեբանական խնդիրները՝ գրողները շատ հաճախ շեշտում են այն հանգամանքը, որ երկարատև պայքարից ու խոշտանգումներից հետո տուն վերադառնալիս նրանք ճգնաժամ են ապրում, քանի որ տուն վերադառնալը նշանակում էր ընդունել պարտությունը: Քաղաքական վեպերի համար հատուկ է նաև հերոսների կեղծ ինքնությունն ու ծածկագիր անունների օգտագործումը: Ի դեպ, հերոսների անունները ևս իրենց մեջ որոշակի սիմվոլիկա և ենթատեքստ են պարունակում. այսպես, հեղափոխականների համար տարածված են Դերիմ (հեղափոխություն), Էյլեմ (գործողություն), Ումուլթ (հույս) և նման այլ անուններ, իսկ ազգայնամոլ-պանթյուրքիստ երիտասարդների համար՝ Սելջուկ, Մեթե, Օդուզ և այլն⁶⁷⁸: Հարկ է նշել նաև, որ 1980-ականների վեպերում հեղափոխականների համար հերոսության մարմնացում և ընդօրինակելի կերպարներ էին շարունակում մնալ թուրք բանաստեղծ Նազրմ Հիքմետը, 1971 թ. մարտի 12-ի ռազմական միջամտությունից հետո կախաղան բարձրացված Դենիզ Գեզմիշն ու ընկերները⁶⁷⁹:

1980 թ. քաղաքական վեպերում արտացոլված է նաև հեղաշրջմանը հաջորդած ժամանակաշրջանը, երբ ձերբակալությունները, խոշտանգումները, ընտանիքին ու սիրելիներին վնասելու վախը, փախուստն ու աքսորը կենսաձև էին դարձել: Այս վեպերի հերոսները հեղաշրջման ծանր ապրումները մոռանալու համար ապավինում են Աստծուն: Ինքնասպան լինել կամ Աստծուն ապավինել, սրանք հերոսների համար հետտրավմատիկ վիճակից դուրս գալու ճանապարհներն են⁶⁸⁰:

Գրականագետ Ֆեթի Նաջրի բնորոշմամբ «մարտի 12-ի» և «սեպտեմբերի 12-ի» վեպերի ամենակարևոր տարբերությունն այն է, որ «մարտի 12-ի վեպերը ձերբակալված, խոշտանգված, սպանված «հեղափոխական» երիտասարդների մահախոսականներն էին, մինչդեռ «սեպտեմբերի 12-ի» վեպերը՝ այդ երիտասարդների քննադատությունը»⁶⁸¹: Բացի այդ, ««մարտի 12-ի» վեպերում գերիշխող ռոմանտիզմը չկար «սեպտեմբերի 12-ի» վեպերում, քանի որ ոչ ոք արդեն հերոս չէր: Նորարարական ոգին այնքան էր լռեցրել գրականությանն ու անշուշտ, հետսեպտեմբերյան հասարակությանը, որ խոշտանգումներին դիմանալն իրենք՝ հեղափոխականներն էլ մեծ գործ չէին համարում: Մինչդեռ «մարտի 12-ի» վեպերում մթնոլորտը բոլորովին ուրիշ էր, բոլորը գիտակցում էին տանջանքներին դիմանալու փորձի առավելությունը»⁶⁸²: Գրաքննադատ Շյուքրու Արքընի համոզմամբ՝ «գրականությունը՝ մասնավորապես վեպը, եթե անգամ ներկայացներ ոչ թե «հերոսի», այլ «անհատի» արկածները, միևնույն է «մարտի 12-ի» նման պետք է «արգասավոր» լիներ: Սակայն չեղավ... սա բացատրվում է նրանով, որ մարտի 12-ն արտացոլվեց գրականության հայելիում, ինչը «քաղաքական» նշանակություն ուներ: Մարդիկ, ովքեր անձնապես չէին ապրել այդ ցավը, գրում էին հանուն «հայցի»: Այսինքն՝ մեջտեղում «հայց», «պահանջատիրություն» կար: Իսկ սեպտեմբերի 12-ը ենթարկվեց «անդառնալի» նորարարությանը, և ձախակողմյա շարժման տեսանկյունից գլորվեց «մութ անդունդը», քանի որ այստեղ արդեն չկար «հայց», համախմբվածություն, ամեն ինչ պայմանավորված էր անհատներով, իսկ անհատը գործում էր «ես ինքս արեցի» ասելու

⁶⁷⁸ Նույն տեղում:

⁶⁷⁹ Նույն տեղում:

⁶⁸⁰ Նույն տեղում:

⁶⁸¹ Naci F., Yüz Yılım 100 Türk Romani, İstanbul, 2010, s. XXXVII.

⁶⁸² Dinçer Y., 12 Eylül Romanında İşkence, İstanbul, 2011, s. 2.

մղումով»⁶⁸³: Այս առումով թուրք արձակագիր Փրնար Քյուրը գրել է. «կասեմ, թե ինչու էր մարտի 12-ն ավելի ազդեցիկ... գլխավորապես այն պատճառով, որ մարտի 12-ի հեղափոխականներն իսկապես չափազանց իդեալիստական ու անմեղ էին: Նման անմեղությունը տանջում է հոգիդ: Ոչ մի մարդ չսպանվեց մարտի 12-ին, ես նկատի ունեմ՝ կառավարությունը իհարկե սպանեց, բայց... Այս տղաները կախաղան բարձրացվեցին ու գնդակահարվեցին առանց որևէ մեկին սպանելու: Մինանը, Դենիզը, Յուսուֆը, Մահիրը... Սա իրողություն է, որ տանջում է հոգիս: Սեպտեմբերի 12-ին ոչ ոք հոգիս չցավեցրեց: Նրանք նույնպես երիտասարդ էին, նույնպես սպանվեցին, բայց նրանք դաժան էին, չունեին մարտի 12-ի անմեղությունը»⁶⁸⁴:

Խոսելով սեպտեմբերի 12-ի վեպի և նրա առաջ բերած գրական զարգացումների մասին՝ որոշ գրականագետներ կարծիք են հայտնում, որ այդ ամենը պատճառ դարձավ հեղաշրջման հետ ուղղակիորեն չառնչվող թեմաների մուտքի գրականություն: Մասնավորապես՝ Նուրդան Գյուրբիլեքի բնորոշմամբ հեղաշրջումից հետո էր, որ հասարակության բաց քննարկումների նյութ դարձան մինչ այդ գաղտնի, անձնական համարվող ոլորտներ: Նորարարական (ավանգարդ) գրողները թուրքական վեպում արմատական փոփոխություններ բերեցին⁶⁸⁵: Թուրք գրականագետ Նեջիփ Թոսունը նշում է, որ նման սոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում «գյուղի ու գյուղացու, բանվորի խնդիրները վեր հանող, սոցիալական անհավասարության մասին աղաղակող ստեղծագործությունների կողքին հայտնվեցին էրոտիկ բնույթի, պատմական անձանց ու դեպքերի, մեղքի, հանցանքի, համասեռամոլության մասին պատմող, դասակարգային իրողությունն ու քաղաքականությունը բացառող վեպեր»⁶⁸⁶: Բերնա Մորանը, սակայն, կարծում է, որ 1980-ականների վեպերի թեմաների և ուղղությունների այս փոփոխությունները չի կարելի կապել միայն հասարակական-քաղաքական շարժումների հետ: Նա նշում է, որ փոխվել էր ընթերցողն ինքը, գրականությունից նրա ակնկալիքներն այլ էին, ուրիշ պատասխաններ էր փնտրում, և բացի այդ՝ համաշխարհային գրականությունում տեղի ունեցող զարգացումները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել նաև թուրքական գրականության վրա⁶⁸⁷:

Ամփոփելով նշենք, որ թուրքական քաղաքական վեպի այս երկրորդ ալիքը թեմատիկ ուղղորդումներ և սրբագրումներ արեց արձակում և անուղղակի պատճառ դարձավ նոր թեմաների մուտքին: Այստեղ հատվում են հասարակական-քաղաքական իրականության և համաշխարհային գրական գործընթացների ազդեցությունները և ի հայտ բերում խառնաշփոթ ու ճգնաժամ:

OVERVIEW OF THE THEMATIC FEATURES OF TURKISH POLITICAL NOVEL (IN THE 1980s)

Anushik Martirosyan
(summary)

12 September 1980, the second military coup in the history of Turkey, has had a debilitating impact on the social, political and cultural life of the country. The article aims to trace out the cultural memories of the 12th September 1980 military coup by focusing on how the

⁶⁸³ Argın Ş., “Edebiyat 12 Eylül’ü Kalben Destekledi” (Söyleşi: Osman Akinhay), Mesele, Eylül 2007, sayı 9, <http://www.birikimdergisi.com/birikim/makale.aspx?mid=449>

⁶⁸⁴ Նույն տեղում:

⁶⁸⁵ Moran B., նշվ. աշխ., էջ 53:

⁶⁸⁶ Tosun N., Seksen Sonrası Türk Öyküsünde Yüzleşme, Yalnızlık, İçme Dönüş, Hece Öykü, Ankara, 2005, s. 59.

⁶⁸⁷ Moran B., նշվ. աշխ., էջ 52:

novelists unify and harmonize the political and social issues with art. It focuses on the novels of the period which highlights the question of violence and oppression applied by the military after the coup. So the main topics of the novels are political immigration, prisons during the 1980 coup d'état, universities, political organizations and the place of women activists in them , torture performed by governmental entities, the political participation of working class and leftist political organizations, social changes after 1980 coup.